ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/89

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.06.2018թ. թիվ 03/26-3/11417-18 գրությամբ «Էլիտբաս» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01242623/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ի 08.06.2018թ. թիվ 2824 և 21.06.2018թ. թիվ 2854 գրությունների հիման վրա, 22.06.2018թ. նախաձեռնել է «Էլիտբաս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. **<u>«Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 08.06.2018թ. թիվ 2824 և 21.06.2018թ. թիվ 2854 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԳՀԾՁԲ-2018/1-ԵՊՀՔ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ է ներկայացրել «Էլիտբաս» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 2018թ. մայիսի 30-ի թիվ 4 որոշմամբ N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էլիտբաս» ՍՊԸ-ն: 2018թ. մայիսի 30-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին: Գնահատող հանձնաժողովի 2018թ. հունիսի 4-ի թիվ 5 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 2018թ. հունիսի 1-ին տրված եզրակացության համաձայն՝ «Էլիտբաս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված շեմը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արմեն Գրիգորյանը:

3. <u>«Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլիտբաս» ՍՊԸ-ն 13.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գորշընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի շրջանակում ներկայացվում է ընկերության՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ տեղեկանքը, 2018թ. երթուղու սպասարկման համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների

նախարարության աշխատակազմի ղեկավարի 2018թ. հուլիսի 9-ի N08/16/11510-18 գրությունը և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2017թ. սեպտեմբերի 29-ի N1073-Ա հրամանի պատճենը:

Նշված փաստաթղթերի համադրված վերլուծությունից հետևում է, որ գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացնելիս «Էլիտբաս» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների առնչությամբ ունեցել է 109,327 ՀՀ դրամի գերավճար՝ 100,000 ՀՀ դրամից: Բացի այդ, առկա կարգավորումներից հետևում է, որ նշված պետական տուրքի գումարը «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից կարող էր վճարվել մինչև 2018թ. սեպտեմբեր ամիսը:

Վերոգրյալի հիման վրա խնդրում ենք «Էլիտբաս» ՍՊԸ-ին չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ՝ փաստաբան Սարգիս Մադաթյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2018թ. թիվ 03/26-3/11417-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ի 08.06.2018թ. թիվ 2824 և 21.06.2018թ. թիվ 2854 գրությունները, «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին 13.07.2018թ. ներկայացրած գրությունը, և դրան կից՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ 06.07.2018թ. թիվ 1891 տեղեկանքը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2017թ. սեպտեմբերի 29-ի N1073-Ա հրամանը, «ԳՀԾՁԲ-2018/1-ԵՊՀՔ» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳՀԾՁԲ-2018/1-ԵՊՀՔ» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 17.05.2018թ. նիստի թիվ 2, 24.05.2018թ. նիստի թիվ 3 և 30.05.2018թ.

նիստի թիվ 4 արձանագրությունները, «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած մասնակցության հայտի պատճենը.

Ուղևորափոխադրումների ծառայությունների գնման նպատակով կազմակերպված «ԳՀԾՁԲ-2018/1-ԵՊՀՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Էլիտբաս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԾՁԲ-2018/1-ԵՊՀՔ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 24.05.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության՝

- 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 2.730.000 ՀՀ դրամ:

- 6-րդ կետով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ Հանձնաժողովը որոշել է բավարար գնահատված մասնակցին ծանուցել գնի նվազեցման շուրջ բանակցությունների վարման վայրի, օրվա և ժամի մասին:

30.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացրած նոր գնային առաջարկը կազմել է 1.980.000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «Էլիտբաս» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 23.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էլիտբաս» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 23.05.2018թ.

դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 105.479 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

04.06.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը՝ որոշել է «Էլիտբաս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ Ընկերության հարկային պարտավորությունների գծով ենթադրյալ կետանցն առաջացել է Ընկերության կողմից ուղևորափոխադրումներ իրականացնելու լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի չվճարման արդյունքում, որը կազմում է շուրջ 100,000 ՀՀ դրամ գումար: Վերջինիս խոսքով, Ընկերությունը՝ ունենալով իր հաշվին մոտ 450,000 ՀՀ դրամ դեբետային մնացորդ (փաստացի գերավճար), ղեկավարվել է այն վարկածով, որ պետական տուրքի վճարման ժամկետը վրա հասնելուն պես նշված գումարը կհաշվանցվի առկա գերավճարից, ինչը սակայն տեղի չի ունեցել, և արդյունքում նշված պետական տուրքի գումարն արտացոլվել է որպես ժամկետանց պարտավորություն:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ընկերության կողմից 01.06.2018թ. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ լիցինզիայի պետական տուրքի գծով պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ միասնական հարկային հաշվին փոխանցված 107.000 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 06.07.2018թ. «Էլիտբաս» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» թիվ 1891 տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 24.05.2018թ. դրությամբ ունեցել է 105.553 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գծով հարկային պարտավորություն:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի ղեկավարի

2018թ. հուլիսի 9-ի N08/16/11510-18 գրությամբ Ընկերությանը տրամադրված պարզաբանումը, ըստ որի՝ ՀՀ կառավարության 27.12.2007թ. թիվ 1587-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը մրցույթի արդյունքների մասին ծանուցվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է վճարել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ

մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ԳՀԾՁԲ-2018/1-ԵՊՀՔ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservuice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.13 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 7.14 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն հրավերի 7.13-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում

լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն՝ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Նույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում՝ հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) տրման կամ օրենքով սահմանված դեպքերում գործունեության որոշ տեսակներ իրականացնելու վերաբերյալ ծանուցում ներկայացրած անձանց հաշվառման ամսաթվից ոչ ուշ:

ՀՀ կառավարության 27.12.2007թ. թիվ 1587-Ն որոշմամբ հաստատված «Գնումների Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման» կարգի 36.1 կետի համաձայն՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը (բացառությամբ միջպետական, միջմարզային, ներմարզային, ներքաղաքային (բացառությամբ Երևան քաղաքի) երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրողների, որոնք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով արդեն իսկ վճարել են պետական տուրքը) մրցույթի արդյունքների մասին ծանուցվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է վճարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրք, հակառակ դեպքում երթուղու սպասարկման իրավունքն անցնում է տվյալ մրցույթում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին: Պետական տուրքը հաջորդող յուրաքանչյուր տարվա համար վճարվում է ոչ ուշ, քան առաջին տարվա համար պետական տուրքի վճարման ամսաթիվը:

«Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով միջմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2017թ. սեպտեմբերի 13-ի

թիվ 8 արձանագրությունը հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 29.09.2017թ. թիվ 1073-Ն հրամանի N1 հավելվածի՝ N8 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության մրցութային հանձնաժողովը որոշել է «Զվարթնոց օդանավակայան-Երևան» թիվ 201 միջմարզային ավտոբուսային երթուղում կայացած ընտրության մրցույթի արդյունքում հաղթող ճանաչել «Էլիտբաս» ՍՊԸ-ին՝ տասը տարի սպասարկման ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

-«Էլիտբաս» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 23.05.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 105.479 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

-Ընկերության կողմից ուղևորափոխադրումներ իրականացնելու լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի մասով պարտավորությունը մարելու նպատակով 01.06.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ միասնական հարկային հաշվին կատարվել է 107.000 ՀՀ դրամի վճարում:

-«Էլիտբաս» ՍՊԸ-ին մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու որոշման մասին համապատասխան արձանագրությունը հաստատվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 29.09.2017թ. թիվ 1073-Ն հրամանով:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 27.12.2007թ. թիվ 1587-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել մրցույթի արդյունքների մասին ծանուցվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև այն, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ին մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու որոշման մասին համապատասխան արձանագրությունը հաստատվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 29.09.2017թ. թիվ 1073-Ն հրամանով, և նկատի ունենալով, որ պետական տուրքը հաջորդող յուրաքանչյուր տարվա համար վճարվում է ոչ ուշ, քան առաջին տարվա համար պետական տուրքի վճարման ամսաթիվը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված պետական տուրքի

գումարը «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից կարող է վճարվել մինչև 2018թ. հոկտեմբեր ամիսը, հետևաբար, տվյալ դեպքում պետական տուրքի գծով արտացոլված հարկային պարտավորությունը չի կարող համարվել որպես ժամկետանց պարտավորություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2018թ. թիվ 03/26-3/11417-18 գրությամբ «Էլիտբաս» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01242623/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Էլիտբաս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ